ՈՐՈՇՈՒՄ

«ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան 06-ը նոյեմբերի 2023 թվական

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1» ծածկարգով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման հիմնավորումը.

«ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերության կողմից կազմակերպված՝ «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերության 1-ին հարկի 2-րդ սեկցիայից մինչև 450 քմ մակերեսով տարածքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում:

«ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի հոկտեմբերի 09-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հաջորդ նիստը հրավիրվել է Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի:

Հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից հայտով ներկայացվել է ենթակապալի պայմանագրեր և ենթակապալ հանդիսացող ընկերությունների լիցենզիաները:

Հաշվի առնելով այն փաստը, որ համապատասխան հրավերով սահմանված աշխատանքները «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հանդիսանում են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից չի ներկայացվել սահմանված աշխատանքներով պայմանավորված Ընկերությանը հատկացված որևէ գործունեության լիցենզիա՝ համապատասխան ոլորտի լիցենզիա չունենալու դեպքում հիմք ընդունելով ենթակապալառու ընկերությունների լիցենզիաները, մասնակցի հետ պայմանագիր կնքելու իրավասությունը պարզելու նպատակով «12.10.2023թ» թվագրմամբ թիվ 305 գրությամբ Պատվիրատուի կողմից հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի թիվ 03/26/20451-2023 գրության՝ լիցենզիան (որպես փաստաթուղթ) ներկայացնելու պահանջ հրավերով չի կարող նախատեսվել՝ հաշվի առնելով մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերին վերաբերվող կարգավորումները: Միաժամանակ նշված պայմանը հրավերով սահմանված

չլինելու դեպքում ևս մասնակցի՝ պարտադիր լիցենզավորված լինելու պահանջը ենթակա է պահպանման: Ինչպես նաև եթե մասնակիցը չունի համապատասխան գործունեություն ծավալելու լիցենզիան և գնման գործընթացին մասնակցում է ենթակապալի պայմանագրով, պայմանով, որ լիցենզիայի պահանջին բավարարում է ենթակապալառուն, ապա այդ հայտը չի կարող բավարարվել, քանի որ հրավերով սահմանված պահանջներին պետք է բավարարի մասնակիցը, իսկ ենթակապալառուն չի հանդիսանում մասնակից:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի «25.10.2023թ» թվագրմամբ թիվ 02/18/13922-2023 գրության՝ լիցենզիա պահանջող շինարարական աշխատանքներ կարող են կատարել միայն այն ընկերությունները, որոնք ունեն քաղաքաշինության բնագավառի համապատասխան լիցենզիա (լիցենզիայի ներդիր):

Հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը հայտով ներկայացրել է ենթակապալի թվով չորս պայմանագրեր և ենթակապալ հանդիսացող ընկերությունների լիցենզիաները: Անկախ այն հանգամանքից հրավերով սահմանված է եղել լիցենզիայի պահանջ թե ոչ, գնման առարկան հանդիսանում է լիցենզավորման ենթակա ոլորտ և ընկերությունը պետք է ունենար համապատասխան փաստաթուղթը: Հայտով ներկայացված փաստաթղթերում առկա էին բոլոր ենթակապալների լիցենզիաները, սակայն բացակայում էր միայն «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության պատկանող փաստաթուղթը /լիցենզիան/, ուստի գնահատող հանձնաժողովը որոշում կայացրեց համաձայն ՀՀ կառավարության *2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետի* ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ «*օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը*»: Օգտագործելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական աղբյուրը՝ (պաշտոնական կայք www.e-license.am) և ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանը՝ (minurban.am/hy/licensecank) գնահատող հանձնաժողովը պարզեց, որ «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը ներառված չէ ՀՀ քաղաքաշինութան բանագավառում լիցենզավորված անձանց և լիցենզիաների ցանկում և չունի համապատասխան լիցենզավորված գործունեություն ծավալելու իրավունք: Փաստը բանավոր հաստատեց նաև մասնակիցը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ու ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պատասխանները՝ ընկերության հայտն անբավարար է որակվել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու համար, քանի որ հրավերի պահանջներին պետք է բավարարի մասնակիցը, իսկ ենթակապալառուն չի հանդիսանում մասնակից:

Հարկ է նշել, որ վերը նշված թիվ 3 արձանագրության վերաբերյալ, ինչպես նաև գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 2023 թվականի հոկտեմբերի 27-ին armeps.am գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով տեղեկացվել է Ընկերությանը և հրապարակվել է gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

Հիմք ընդունելով Հրավերի 1-ին մասի 7.5 կետը, համաձայն որի՝ *«7.5 Պատվիրատուի ղեկավարը հայտի ապահովման վճարման պահանջը բանկին, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ներկայացնում է գրավոր՝ հայտի ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:....»*, «02.11.2023թ» թվագրմամբ թիվ 331 ծանուցմամբ Ընկերությանը տեղեկացվել է, որ հայտի ապահովման գումարը համաձայն Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման երաշխիքի պետք է վճարվի բենեֆիցիարի հաշվեհամարին փոխանցման միջոցով, իսկ «02.11.2023թ» թվագրմամբ թիվ 332 գրությամբ Պատվիրատուն դիմել է «Ֆասթ Բանկ» ՓԲ ընկերությանը համաձայն «06.10.2023թ»

թվագրմամբ FB3300E#874-23 բանկային երաշխիքի 7-րդ կետով սահմանված ժամկետով Ընկերության հաշվից սահմանված գումարը գանձելու համար:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ *«19)* ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող****, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.»*

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ *«Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,» :*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է* ***գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում****: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:»:*

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները՝ Պատվիրատուն արձանագրում է, որ «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը գնման հայտի հավելված 1-ով հայտնել է, որ ներկայացնում է հրավերի պահանջներին համապատասխանող հայտ, ինչը չի համապատասխանել իրականությանը, ինչով խախտել է գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը և արդյունքում հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն փաստը, որ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է **գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում, իսկ 10-րդ օրը լրանում է 2023 թվականի նոյեմբերի 06-ին և նկատի ունենալով այն հանգամանքը, որ «06.10.2023թ» թվագրմամբ FB3300E#874-23 բանկային երաշխիքի 7-րդ կետի համաձայն՝ «Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար», իսկ «Ֆասթ Բանկ» ՓԲ ընկերությանը սահմանված կարգով պահանջի ներկայացման օրվանից հաշված 5 աշխատանքային օրը լրանում է 2023 թվականի նոյեմբերի 08-ին, ինչով փաստվում է, որ առկա է այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին՝** գտնում եմ, որ հայտի ապահովման վճարը բենեֆիցիարի հաշվեհամարին չփոխանցելու դեպքում **առկա է լինելու** «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ

ընկերությանն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությանը ներառել նշված ցուցակում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի նոյեմբերի 09-ից:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	**որպես ընտրված մասնակից** հրաժարվել կամ **զրկվել է պայմանագիր կնքելու** իրավունքից	
«ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ » ՍՊԸ	02863508	ՀՀ, ք.Երևան Տերյան փողոց 1, շենք 1, բնակարան 17	«ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ մասնակիցը չունի համապատասխան գործունեություն ծավալելու իրավունք /լիցենզիա/			06.11.2023 թ. «ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1»

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան»
ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն

Ռաֆայել Սահակյան